

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՆԴԹԱՂԱՄԱՍԻ ՆԵՐՔԻՆ
ՉԱՓԱԳՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿԿ-ԲՄԱՇՁԲ-20/07**

ք. Երևան

«23» հունիսի 2020 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՊ Գեոնավիթել» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Պետրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Կոնդ թաղամասի ներքին չափագրման հատակագծերի ստեղծման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 15600000 (տասնհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Կ 900011030617
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար

Ա. Թովմասյան
(ստորագրություն)



Handwritten signature

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<ՍՊ Գեոնավիթել>> ՍՊԸ

ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,
Հաղթանակ թաղ., 4 -րդ փող., 57 տուն
Հ/Կ 1510028787840100
ՀՎՀՀ 01847486

Տնօրեն *Ս. Մանուկյան*
(ստորագրություն)



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

« րրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/« րրամ	ընդհանուր գինը/« րրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	71351530/4		րրամ	15600000	15600000	1		Պայմանագրի հաշվառման պահից մինչև 25.12.2020 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՆԴԹԱՂԱՄԱՍԻ ՆԵՐՔԻՆ ՉԱՓԱԳՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ


1. Բնագավառի նկարագրությունը և հիմնական խնդիրները

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի Կոնդ թաղամասի կադաստրային քարտեզներում տեղ գտած սխալների ու անճշտությունների ճշգրտումը և դրան զուգահեռ հողային ֆոնդի ամբողջական դիտարկումը հույժ կարևոր խնդիր է համարվում կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացման համար:

Երևան քաղաքի տարածքում անշարժ գույքի կադաստրային քարտեզագրման աշխատանքները սկսվել են 1998թ. և ավարտվել՝ 2002թ: Կադաստրային քարտեզագրման հանության հիմքը 1998-2000թթ. ստեղծվել է պայմանական, տեղական, CK-63 և CK-42 կոորդինատային համակարգերում, իսկ 2001թ.՝ CK-42 կոորդինատային համակարգում: Հանության աշխատանքները կատարվել են ավանդական վերգետնյա (մենզուլային, տախեոմետրական հանույթների, գծային և անկյունային հատումների) եղանակով: Երևան քաղաքի համար տեղագրական և կադաստրային քարտեզները ստեղծվում էին Երևան քաղաքի համար ընդունված տեղական կոորդինատային համակարգում: Տեղական կոորդինատային համակարգում ստեղծված կադաստրային քարտեզները մեկ միասնական՝ WGS-84 (ArmREF02) ազգային կոորդինատային համակարգի բերելուց հետո առաջացան անշարժ գույքի միավորների սահմանների որոշակի սխալներ:

Ծրագրով նախատեսված է իրականացնել Երևան քաղաքի Կոնդ թաղամասի մասնավոր կառուցապատ ենթակա տարածքի 1096 անշարժ գույքերի 125000 քառ" մետր մակերեսով շինությունների չափագրման աշխատանքներ, որոնք պետք է համապատասխանեն շենք, շինության հատակագծին ներկայացվող ներքոհիշյալ պարտադիր պահանջներին և ձևերին (տես" նկ" 1):

Անշարժ գույքի ընթացիկ հաշվառումն իրականացվում է սկզբնական հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ նախկինում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխու թյունների հայտնաբերման, իրավունքների պետական գրանցման, կադաստրային գնահատման, ինչպես նաև կադաստրային քարտեզներում արտացոլելու նպատակով: Անշարժ գույքի քանակական տվյալների (մակերեսների, գծային չափերի, ծավալների, ձևի և այլն) հավաքագրման նպատակով իրականացվում է չափագրում: Չափագրման իրականացվում է տարբեր չափիչ սարքերի (լազերային հեռաչափեր, էլեկտրոնային տախեոմետրեր և այլն) միջոցով՝ համապատասխան որակավորման վկայական ունեցող անձանց կողմից:



Նկ"1 Կոնդ թաղամասի չափագրման ենթակա տարածք

Չափագրողի կողմից հողամասերը չափագրվում և գծագրվում են Կադաստրի կոմիտեի կողմից Կոնդ թաղամասի կադաստրային հանութագրման տվյալների հիման վրա: Հողամասի ներքին չափագրումն իրականացվում է իրենց սահմանային չափերով, նշելով և համարակալելով բոլոր շրջադարձային (բեկման) կետերը, կոորդինատները, հողամասի տվյալ հատվածների երկարությունները:

Հողամասի ներքին չափագրումն ավարտելուց հետո չափագրվում և ըստ հողամասում գտնվել տեղադրության գծագրվում են բոլոր շինությունները (բնակելի տները, հասարակական, արտադրական նշանակության շինությունները, բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերը, պարիսպները և այլ անշարժ գույքերը): Չափագրվում է պարիսպների երկարությունը, լայնությունը և բարձրությունը:

Ընդունելով արտաքին չափերով շինությունների չափագրման տվյալները, չափագրվում են իրականացվում դրանց ծավալում գտնվող բոլոր տարածքները՝ ներքին չափերով: Չափագրվում է յուրաքանչյուր տարածքի երկարությունը, լայնությունը, ներքին բարձրությունը, ինչպես նաև կողո պատերի և միջնապատերի հաստությունները:

Ներքին չափագրումները կատարվում են շինությունների հատակից 1.20 - 1.30 մետր բարձրությամբ: Միաժամանակ յուրաքանչյուր տարածքի վրա նշվում է առկա դռների ու պատուհանների տեղադրությունը:

Չափագրողը Երևան քաղաքում գտնվող անշարժ գույքի չափագրման պատվերը ստանալուց հետո, հատակագծի կազմումը և կոմիտեին տրամադրումը պետք է իրականացնի մինչև 10 օրյա ժամկետում: Նշված ժամկետներում ծառայության արդյունքները չներկայացնելու դեպքում պետք է տրամադրվի գրավոր պարզաբանում: Կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված պարզաբանումը ոչ հիմնավոր գնահատվելու դեպքում՝ ուշացված ժամկետների մասով, պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կկիրառվեն:

Նախատեսված աշխատանքների ավարտից հետո հողամասի և շինությունների հատակագծերի ներքևի համապատասխան մասում որակավորում ունեցող անձի կողմից լրացվում է իր անունը, ազգանունը (անվանումը), կատարման ամսաթիվը, որակավորման վկայականի համարը, տրման ամսաթիվը և ստորագրվում:

Հատակագծեր կազմողը պարտավոր է մինչև անշարժ գույքի պետական գրանցումը՝ հատակագծերում անվճար կատարել անհրաժեշտ ուղղումներ և փոփոխություններ՝ առաջադրանքը ստանալուց հետո վերը նշված ժամկետներում:

Եթե պայմանագրի կատարման ընթացքում պարզվի, որ հատակագիծը կազմելու համար անհրաժեշտ են սույն տեխնիկական բնութագրով չնախատեսված հետազոտություններ կամ այլ գործողություններ, ապա դրանք իրականացվում են Կատարողի կողմից՝ առանց լրացուցիչ վճարի:

2" Շենք-շինությունների հատակագծին և բնութագրին ներկայացվող
պարտադիր պահանջները

1. Շենք-շինությունները չափագրվում և դրանց հատակագծերը կազմում է քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնող համապատասխան որակավորում ունեցող անձը:

2. Եթե հողամասում նախկինում եղել են շենք, շինություն, իսկ չափագրման պահին քանդված են, ապա չափագրում (հաշվառում) իրականացնող անձը եզրակացություն է տալիս պատվիրատուին շինությունը քանդված (ոչնչացված) լինելու վերաբերյալ, իսկ շինությունը մասնակի քանդված լինելու դեպքում՝ քանդված մասի վերաբերյալ տալիս է եզրակացություն, իսկ գոյություն ունեցող մասի համար՝ հատակագիծը:

3. Ինքնակամ կառուցված շինությունները, կոնստրուկտիվ պատերի վրա բացված ինքնակամ դռները, պատուհանները հատակագծում նշագծվում (շտրիխապատվում) են:

4. Բաժանվող գույքի հատակագիծը կազմվում է հետևյալ կերպ՝ հավելված 3-ում սահմանված հատակագծում ցույց է տրվում ընդհանուր գույքը, որի վրա նշագծվում (շտրիխապատվում) և ցույց է տրվում բաժանվող մասը:

5. Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում՝ շենքերի ծավալից դուրս՝ բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների (պատշգամբ, սենյակ, խոհանոց և այլն) հատակագիծը կազմվում է բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի հատակագծի հետ միասին, որտեղ նշագծվում է (շտրիխապատվում) ինքնակամ կառույցը (շինության հատակագծից բացի առանձին թղթի վրա սխեմատիկ ցույց է տրվում շենքը կցակառույցի հետ միասին, և ցույց է տրվում կցակառույցի հեռավորությունը շենքի անկյուններից):

6. Եթե բազմահարկ շենքի, շինության որևէ հարկում կատարվում է ներքին փոփոխություն, ապա պատվիրատուի ցանկությամբ չափագրվում է միայն տվյալ հարկը:

7. Կախված շինությունների չափերից, շինությունների հատակագծերը ներկայացվում են Ա-1, Ա-2, Ա-3 կամ Ա-4 չափսի թղթի վրա, որոնց վրա պետք է արտահայտվեն հետևյալ պարտադիր պահանջները.

1) Շինությունների հատակագծի (այսուհետ՝ հատակագիծ) առաջին էջում «Շինությունների հատակագիծ» գլխատառերով նշագրումից ցած նշվում են օգտագործողի տվյալները (քաղաքացու անունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը):

2) «Մարզ, համայնք, հասցե» տողում լրացվում է շենք, շինությունների (այսուհետ՝ շինությունների) գտնվելու վայրը կամ հասցեն:

3) Հատակագծում գծագրվում են հողամասում գտնվող բոլոր շինությունների հատակագծերն ըստ հարկերի՝ ներքին չափերով: Այն շինությունները, որոնց մի մասը գտնվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված հողամասից դուրս, չափագրվում են միայն հատկացված հողամասում գտնվող շինությունների մասերը (եթե հատկացված հողամասին կից կա զավթած հողամաս կամ կառուցված է ինքնակամ շինություն, որի մի մասը գտնվում է հատկացված հողամասում, իսկ մյուս մասը զավթած հողամասում, ապա հատկացված հողամասի և ինքնակամ զավթած հողամասի հատման գծերը հատակագծում պատկերվում են կետագծերով): Տարածքների ներքին չափագրման ժամանակ նշվում են նաև աստիճանավանդակները և որմնախորշերը:

4) Հատակագծի վերևի մասում գծվում է նկուղային հարկի հատակագիծը, այնուհետև հերթականությամբ դեպի ներքև գծվում են մնացած հարկերը և օժանդակ շինությունները:

5) Գծագրերը կատարվում են թղթի եզրերին սիմետրիկ, ընդ որում գծագրի և թղթի եզրերի միջև թողնվում է 2-3 սմ-ից ոչ պակաս տարածություն:


6) Գծագրերը կատարվում են 1:100 մասշտաբի, մեծ մակերես ունեցող շենքերի, շինությունների համար 1:200 կամ 1:500 մասշտաբի:

7) Հարկի ներքին տարածքները հատակագծի վրա համարակալվում են մուտքի դռնից սկսած ժամացույցի սլաքի ուղղությամբ, յուրաքանչյուր տարածքի կենտրոնում գիծ է գծվում և համարիչում գրվում է հերթական համարը, իսկ հայտարարում տվյալ տարածքի մակերեսը: Չափերը իրենց ներքևի մասով պետք է ուղղված լինեն թղթի ներքևի մասին:

8) Յուրաքանչյուր հարկի գծագրի վրա նշվում են առկա դռների, պատուհանների, բաց պատշգամբի տեղադրությունը: Տարածքների ներքին չափագրման ժամանակ նշվում են նաև աստիճանավանդակները և որմնախորշերը:

9) Յուրաքանչյուր հարկի գծագրին կից գրվում է հարկի անվանումը (նկուղ, կիսանկուղ, 1-ին հարկ և այլն), արտաքին և ներքին բարձրությունները, պատերի և միջնապատերի հաստությունները:

10) Եթե շինության բաժանմունքի համարակալման և մակերեսի չափի կոտորակը չի տեղավորվում տարածքի ներսում, ապա այն սլաքով դուրս է բերվում գծագրից և գրվում է ազատ տեղում, բայց այնպես, որ պարզ լինի, թե որ տարածքին է այն վերաբերում (տես գծագիր N 7):



11) Եթե շինության մակերեսների մեծ լինելու կամ հարկերի քանակը շատ լինելու պատճառով լրիվ գծագիրը չի տեղավորվում հատակագծի վրա, ապա մնացած հարկերի համար գծագրվում են լրացուցիչ հատակագծեր: Հատակագծի երկրորդ էջում լրացվում է «Շինությունների բնութագիր» աղյուսակը հետևյալ կերպ.

8. Աղյուսակի առաջին սյունակում լրացվում է շինությունների համարները:

9. 2-րդ սյունակում լրացվում է շինությունների նպատակային նշանակությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի «Հասարակական և արտադրական նշանակության շինությունների ցանկը հաստատելու մասին» N 1194-Ն որոշմամբ սահմանված կարգի և ՀՀ քաղաքաշինության նախարարի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 1998 թվականի մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ըստ նպատակային նշանակության շենքերի և շինությունների դասակարգումը» թիվ 108-Կ համատեղ հրամանի:

10. 3-րդ սյունակում լրացվում է շինության գործառնական նշանակությունը (բնակելի տուն, խանութ, արհեստանոց և այլն):

11. 4-րդ սյունակում լրացվում է շինությունների գտնվելու հարկը:

12. 5-րդ սյունակում լրացվում է շինությունների հարկայնությունը:

13. 6-րդ սյունակում լրացվում է համապատասխան հարկի կամ տարածքի օրինական կառուցված շինությունների ներքին մակերեսը՝ քառակուսի մետրով:

14. 7-րդ սյունակում լրացվում է համապատասխան հարկի կամ տարածքի ինքնական կառուցված շինությունների ներքին մակերեսը՝ քառակուսի մետրով:

15. 8-րդ սյունակում լրացվում է համապատասխան հարկի կամ տարածքի շինությունների ներքին բարձրությունը՝ մետրով:

16. 9-րդ սյունակում լրացվում է համապատասխան հարկի կամ տարածքի շինությունների ներքին ծավալը՝ խորանարդ մետրով:

17. 10-րդ սյունակում լրացվում է շինությունների համապատասխան հարկի կառուցման տարեթվերը:

18. 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ սյունակներում «V» տառատեսակով նշվում է շինությունների տանիքի նյութը՝ համապատասխանաբար թիթեղ, շիֆեր, կղմինդր, այլ նյութ:

19. 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ սյունակներում «V» տառատեսակով նշվում է շինությունների ավարտվածության աստիճանը (համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում գույքահարկով հարկման նպատակով անավարտ (կիսակառույց) շինությունների բնութագրման կարգը սահմանելու մասին» թիվ 645-Ն որոշման), որը կիրառվում է բացառապես տվյալ գույքի կադաստրային գնահատության համար:

20. 19-րդ սյունակում լրացվում է պատերի շինանյութի տեսակը (բազալտ, տուֆ, երկաթբետոն և այլն):

21. 20-րդ, 21-րդ սյունակներում «V» տառատեսակով նշվում է շինությունների միջհարկային ծածկի նյութի տեսակը՝ համապատասխանաբար փայտ, երկաթբետոն:

22. 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ սյունակներում «1, 2, 3, 4» թվերով նշվում է շինությունների արտաքին հարդարումն ըստ կողմերի՝ համապատասխանաբար սրբատաշ, երեսպատված, սվաղած, ապակեպատ, առանց արտաքին հարդարման: Շինության ճակատը համարվում է արտաքին հարդարում ունեցող, եթե շինության ճակատամասի ընդհանուր մակերեսի 50 տոկոսից

ավելին ունի արտաքին հարդարում:

23. 27-րդ սյունակում լրացվում է բոլոր հարկերի կամ տարածքների շինությունների ընդհանուր ներքին մակերեսը՝ քառակուսի մետրով:

24. 28-րդ սյունակում լրացվում է բոլոր հարկերի կամ տարածքների օրինական կառուցված շինությունների ընդհանուր ներքին մակերեսը՝ քառակուսի մետրով:

25. 29-րդ սյունակում լրացվում է բոլոր հարկերի ինքնակամ կառուցված շինությունների ընդհանուր ներքին մակերեսը՝ քառակուսի մետրով:

26. Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների համար լրացվում է աղյուսակի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ սյունակները: Պարիսպների համար լրացվում է աղյուսակի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 19-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ սյունակները: Ծածկերի, բաց պատշգամբների, շվաքարանների, հարթակի, աստիճանավանդակի համար լրացվում են աղյուսակի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ սյունակները: Մյուս շինությունների համար լրացվում է աղյուսակի բոլոր սյունակները: Եթե չափազրված շինությունների մեջ կան բաց պատշգամբներ, հարթակներ, ծածկեր, կամ շինության հարկի որևէ մասը տարբերվում է իր միջհարկային ծածկի, տանիքի նյութով, արտաքին պատերի շինանյութի տեսակով, կառուցման տարեթվով, բարձրությամբ, ապա աղյուսակում դրանք լրացվում են առանձին տողերով:

27. Կատարված աշխատանքները պատվիրատուին տրամադրվում են թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչներով՝ շինությունների հատակագծերը շեյփ (shp), դի վի ջի/դի իքս էֆ/դի գը են (dwg/dxf/dgn) ֆորմատներով, իսկ շինության բնութագիրը՝ էքսել (xls) ֆորմատով, կամ լիազոր մարմնի կողմից տրամադրված ծրագրով:

28. Անշարժ գույքի նկատմամբ գործարք իրականացնելիս անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից դիմումի հետ միասին ներկայացվում է նաև որակավորում ունեցող անձի կողմից կազմված շինությունների հատակագծերը և շինության բնութագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակով:

29. Աղյուսակի ներքևի մասում լրացվում է որակավորված անձի անուն-ազգանունը, կատարման ամսաթիվը, համապատասխան որակավորման վկայականի համարը, տրման ամսաթիվը, իրավաբանական անձի պետական գրանցման համարը, անվանումը, ստորագրվում է և դրվում կնիք:

Պարտադիր պայման

Համաձայն աշխատանքների իրականացման ժամանակացույցի կատարողն անհրաժեշտ է պատվիրատուից ստանա Կոնդ. թաղամասի գույքային միավորների արդեն իսկ ուղղված և թարմացված արտաքին քարտեզագրման տվյալների փաթեթը և հողամասերի ու շենք-շինությունների ներքին չափագրումները կատարել քարտեզագրված WGS-84 (ArmREF02) համակարգի կոորդինատավորված ուրվագծերի ներսում:

Կատարողը նշված ծառայության մատուցումը իրականացնում է Երևան քաղաքի Կոնդ. թաղամասի տարածքում, իսկ մատուցվող ծառայության փուլային և վերջանական արդյունքները հանձնում է ք.Երևան, Արշակունյաց 7 հասցեում գտնվող Կատաստրի կոմիտե:

3. Աշխատանքների իրականացման նպատակը

Կոնդ. թաղամասի ներքին հանութագրման աշխատանքների իրականացման գործընթացում, ընդհանուր քարտեզագրական ուղղված աշխատանքները, ինչպես նաև անշարժ գույքերի միավորների՝ հողամասերի և դրանցում գտնվող շենք-շինությունների իրականացվող ներքին չափագրումները հիմք կհանդիսանան միասնական կոորդինատային համակարգում անշարժ գույքի սահմանների ճշգրտման, դրանց ամրացման և օրենսդրական ակտերով ձևակերպման գործընթացին: Կունենանք ճշտված հողամասերի և շենք շինությունների մակերեսներ, որոնք հիմք կհանդիսանան գույքահարկի ճշգրիտ հաշվարկման համար:

4" Աշխատանքների իրականացման միջոցառումները

Երևանի Կոնդ թաղամասի կադաստրային քարտեզներում տեղ գտած սխալների ու անճշտությունների ճշգրտմանն ուղղված շենք-շինությունների ներքին չափագրման աշխատանքներն իրականացնելու և հատակագծերը կազմելու համար նախատեսվում է՝

- Ուսումնասիրել թաղամասի գլխավոր հողօգտագործման հատակագծի հիման վրա կոմիտեի համակարգից ձեռք բերված 1096 միավոր գույքերի անհրաժեշտ տվյալները: ինչպես նաև օրթոֆոտոհատակագծերի օգնությամբ կադաստրային քարտեզների ուղղման արտաքին հանութագրման աշխատանքների նյութերը: Արտաքին տարածքի հանութագրված և թարմացված կադաստրային քարտեզները կտրամադրվեն պատվիրատուի կողմից:

- Կոնդ թաղամասի տարածքի վրա իրականացված և կապակցվող գեոդեզիական կետերի օգնությամբ դաշտային չափագրման արդյունքների հիման վրա ստացված կառուցապատ տարածքի պլանային հորիզոնական հատակագծը օգտագործել ներքին չափագրումը ճշգրիտ կապակցելու համար:

- Աշխատանքների ամբողջական իրականացման արդյունքում անհրաժեշտ է ներկայացնել հաշվետվություն և տվյալների ստացման բոլոր ելքային նյութերը (նկարներ և այլն՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով):

Չափագրման աշխատանքներն ավարտելուց հետո պատվիրատուին է հանձնվելու հետևյալ փաստաթղթերը՝

1. Որակավորում ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագծերը:
2. Հողամասերի և շենք, շինությունների արտաքին լուսանկարները թղթային և էլեկտրոնային տարբերակով:
3. Կոմիտեից ձեռք բերված տվյալները (խտասկավառակ (CD), տեղեկանքի կրկնօրինակ և այլ):
4. Կախված հողամասերի չափերից, հողամասերի հատակագծերը Ա-1, Ա-2, Ա-3 կամ Ա-4 չափսի թղթի վրա:
5. Բոլոր շինությունների հատակագծերը և բնութագրերը, հողամասի և շինությունների շրջադարձային (բեկման) կետերի համարները, կողողինատները, կետերի միջև գծային չափերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20 հոկտեմբերի 2011 թ N 284-Ն հրամանում ներկայացվող օրինակելի ձևերի:
6. Երևան քաղաքի Կոնդ թաղամասի ներքին չափագրման տեխնիկական հաշվետվությունը:
7. Տեխնիկական հաշվետվությունը և չափագրված նյութերը 2 (երկու) օրինակից՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

5. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում կունենանք ք"Երևան Կոնդ թաղամասի կառուցապատ հատվածի 1096 ներքին չափագրման ճշգրտված հատակագծերը, որ հիմք կհանդիսանա գույքահարկի ճիշտ հաշվարկման, տարածքի հետագա զարգացման պլանավորման համար և այլն :

6. Աշխատանքների իրականացման ժամանակացույցը

Նախատեսվող աշխատանքների տվյալները ըստ ծավալների ու ժամկետների, տրված է աղյուսակ 1-ում:

Հ Ա Շ Վ Ա Ր Կ

Կոնդ թաղամասի ներքին հանութագրման աշխատանքների

աղյուսակ 1

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	2020 թ			Ընդհանուր Ծավալը
			II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	Ձեռք բերված և տրամադրված նյութերի ուսումնասիրում	միավոր	1096	-	-	1096
2	Հողամասի և շենք շինությունների ներքին չափագրում, սխեմաների կազմում	միավոր	300	400	396	1 096

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	2020 թ			Ընդհանուր Ծավալը
			II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
3	Տեխնիկական հաշվետվության կազմում, հանութագրված նյութերի փաթեթի հանձնում	Տեխ"հաշվետ" Հանութ" նյութեր	-	-	1	1

* աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030617
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար _____ Ա. Թովմասյան

(ստորագրություն)
Կ.Տ.



ԿԱՏԱՐՈՂ

<<ՍՊ Գեոնավիթել>> ՍՊԸ
ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,
Հաղթանակ թաղ., 4 -րդ փող., 57 տուն
Հ/Հ 1510028787840100
ՀՎՀՀ 01847486

Տնօրեն _____ Հ. Պետրոսյան

(ստորագրություն)
Կ.Տ.



[Handwritten signature]
Լ.Ն. Արթուրյան

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Որամ»

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**				
			մեկտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351530/4	Երևան քաղաքի Կոնոթաղամասի ներքին չափագրման հատակագծերի ստեղծման աշխատանքներ	3900000	7800000	11700000	15600000	15600000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
«ՖՆ Գործառնական վարչություն»
Հ/Հ 900011030617
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար

Վ. Թովմասյան
(ստորագրություն)



ԿԱՏԱՐՈՂ

«ՍՊ Գեոնավիթել» ՍՊԸ
ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,
Հաղթանակ թաղ., 4 -րդ փող., 57 տուն
Հ/Հ 1510028787840100
ՀՎՀՀ 01847486

Տնօրեն

Պետրոսյան
(ստորագրություն)



[Handwritten signature]
Վ. Թովմասյան

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Կատարված աշխատանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն